

գերի բնակիչը բազմացաւ . և ընդհակառակն ազատ ժողովուրդը աճեցաւ
15 առ 100 : Այս նաև մէկ երկու՝ լահանգներ ալուր որ գերիները բնաւ չեն
աճած : Ո՞երիլընտի մէջ, գերիք՝ որ թէպէտ արդէն իսկ քիչ են, 61 առ
100 նուազեցան . Տեղառերի մէջ ալ

նոյնպէս պակսեցաւ՝ 34 կամ 35 առ
100 :

Ի՞չա հոս համառօտ մը կը զնենք գե-
րի գործածող՝ լահանգաց մէջ եղած
գերի և ազատ ժողովուրդոց ցուցակը .
ըստ 1860^ի աշխարհահամարին :

| | |
|---------------------------------|--|
| Վիրճինիա | |
| Միստուրի | |
| Հար . և Հիւս . Գարովինա | |
| Քէնդըքի | |
| Գէննըսսի | |
| Մէրիլընտ | |
| Ճէործիա | |
| Ալապամա | |
| Դէքսաս | |
| Միսիսիբի | |
| Արքանսաս | |
| Ուրիշ վեց Նահանգք և վիճակք ալ . | |

| Ազատք | Գերիք |
|-----------|-----------|
| 1,097,373 | 495,826 |
| 1,085,595 | 445,619 |
| 988,151 | 735,562 |
| 920,077 | 225,400 |
| 859,528 | 287,412 |
| 646,183 | 35,582 |
| 615,336 | 467,471 |
| 520,444 | 435,463 |
| 415,799 | 184,936 |
| 407,054 | 479,607 |
| 331,710 | 109,065 |
| 715,223 | 428,390 |
| 8,602,470 | 3,999,853 |

Հոս մէկ՝ լահանգ մը, այսինքն միայն Ո՞իսիսիբի մէջ, գերի ժողովուրդը՝ ա-
զատ ժողովուրդէն առաւելեալ կը տես-
նենք . նոյնպէս է նաև եթէ հարաւային Պարովինան առանձին առնունք . յո-
րում 407,185 սեք կը համրուին, և 308,
186 սպիտակք : Ո՞երջապէս, այն՝ լա-
հանգներն միայն առնելով ուր որ գերե-
վարութիւնն թոյլ տուեալ է, 1000
հոգւոց մէջ 317 սե են, որ է ըսել ժո-
ղովրդեան երկու երեքը սպիտակ են :

մենակեր կենդանւոյս համար ուտելիք չկայ որուն ակռայ չմերձեցունէ, մա-
նաւանդ բուսական ուաելեաց . իր եղ-
ծիչ բնաբոյս բարուքը և ոչ իսկ քաղցուն
չծառայող բաներուն ալ կը խնայէ, ինչ-
պէս են լաթեղէններն ու ուրիշ ամէն
գործուածք :

Դաշտաց մէջ մուկն երկրագործու-
թեան հարուածն ու պատիժն է . օգոց
անհարթութիւններէն պաշտպանուե-
լու համար որջ մը, խլուրդի բոյն մը կը
գտնէ ու հոն կը հաստատէ բնակու-
թիւնը, և կենաց ամէն գիւրութիւն-
ները չորս կողմը կը շարէ, և ատենին
պաշար կը ժողովուէ, յորեն, կաղին,
խողկաղին, որպէս զի անկերակուր
չմնայ ու սով ցրաշէ :

Ինտանի և դաշտային մկէն զատ ,
գլխաւոր մկանց կարգը պէտք է համա-
րել նաև ջրային մուկն , որ մասնաւո-
րապէս կենդանական ուտելեօք կը սնա-
նի : Ո՞սիկայ լծերու, ճահիճներու, գե-
տակներու , և առուակներու ափանցը
վրայ կ'ապրի , և ասոր ալ վնասը կը հաս-
նի մարդուս . վասն զի այս ջրոց մէջ
բնակող ձկանց մանրներն բոլոր կ'եղձա-
նէ , որոնք մարդուս մննդեանը կը ծա-

Մուկն և գաղրականուրիւն մկանց :

Հնձոց և այն ամէն բանի որ մարդուս
մննդեանը կը ծառայէ՝ մեծ թշնամի է
մուկն , այն որկորաժետ կրծողն՝ որ ինչ
գանէ կ'եղձանէ , երկրիս ամէն բնա-
կելի մասանցը վրայ սփռուած է , և ամէն
զի իր բնակութիւնն հաստատած է ,
թէ շինից մէջ, թէ դաշտաց մէջ և թէ
ջրոց ափանց վրայ :

Ը ինից մէջ պատերն ու յարկերը կը
ծակէ, ու հոն կ'ապաստանի , և մարդուս
գործածութեանը ծառայող ամէն բան
կ'ապականէ, ու կը փառացընէ . այս ա-

ռայեն, ինչպէս նաև ջրային միջատներ, արմատներ և խոտեր. այս մկան միսը քանի մը երկիր գեղացիները կ'ուտեն պահոց օր : Այսպէտ և ջրային մկան ոտիցը մատուցները (թաղանթ չունին, 'ի վերսոյ այսր ամենայնի դիւրաւ կը լողայ, խորը կը մտնէ ու երկար ժամանակ ջրին տակը կը մնայ որսը ձեռք բերելու համար, զոր կ'ուտէ ցամաք ելլելով կամ ործ տանելով :

Շայց այշափս միայն ըբաւեր մկանց անյագութեանը . և բարեբաղդաբար սովու ժամանակ մէկզմէկ ալ կը պատուեն, և իրարու հետ կոռւելու ատեն շատերը կը սպանուին : Դարձեալ թշնամի են ասոնց աղուեսն, արծը, աքիսն ու կզաքիսը, որոնք մեծ ջարդ կուտան : Այս որ այսպէս ըըլլար, քիչ ժամանակէն բոլոր աշխարհք միներով կը լեցուէր, վասն զի շատ բազմածին են, և ամէն զի կը վիստան :

Դ իննէսո շատ հետաքրքրական բաներ կը պատմէ՝ լորուեկիոյ մկանց գաղթականութեանցը վրայ, որոնց հասակն քիչ մը պզտիկ է սովորականներէն : “ Իմէն տասը կամքսան տարին մէյմը, Կ'ըսէ, բազմաթիւ խումբերով բանակներ կը կազմեն ու գաղթականութեան՝ հողուն մէջէն իրենց ճամբայ բանալով երկու մատ խոր, ու հէս կամ մէկ քառորդ կանգուն լայն : ” Այս ճանապարհորդութեանա ժամանակի խոտ ու հողէն ելած արմատներ կ'ուտեն . ծագերնին ճամբան կը ձրկ . նին, ու իւրաքանչիւր մուկ մէկը բերաննին ու մէկալը շալակնին առած կը տանին, իսկ մնացածներն հոն կը թողուն, թէ որ մնացորդ ըլլայ : ” Հիւսիսացին լեռներէն կ'իջնեն և գեղ ՚ի Պոթնիոյ ծոցը կը դիմեն . բայց սովորաբար յառաջ քան հոն հասնենին կը ցըռուին ու կը սատկին : ” Աքգելք մը չկայ որ ասոնց խոտորել տոյ ճամբան, և միշտ ուղիղ գծով կը կտրեն : Եթէ մարդու մը հանդի պին, կը ջանան անոր սրունից մէջէն անցնելու քան թէ ճամբանին խոտորելու : Եթէ խոտի կուտի մը հան-

,, գիւղին, փոխանակ անոր շրջանն ընելու մէջէն ճամբայ կը բանան կրծելով ու փորելով : Աամիկն, որ չէր գիտէր, թէ ուսկէ կուգան մկանց այս բազմութիւններն, կը կարծէր թէ ամպերէն կ'ընկնին, և նոյն իսկ Ա որմիոս գիտնականը գիրք մը շարադրեր է այս բանիս ստուգութիւնը շատ պատճառներով հաստատելու համար : ”

(Օ ինուրուական մեծամեծ արշաւանաց ետեւէն յաջորդեր է միշտ մկանց արշաւանքը : Ի՞անի մը տարի առաջ Պիելցիոյ գիտութեանց Ճեմարանին մէջ գիտնական մը կ'ըսէր . ” Ա մուկն, որուն ուսկից եկած ըլլալը Ճիշտ չպիտուիր, խաչակրացմէ ետքն Խւրոպա արշաւեց, կամ Իմերիկոյ գտուելէն ետեւ . Հնդկաց դաշտանունին Խւրոպա 1730 թուղին ժամանականերն եկաւ . և արդէն շատ տեղերէ սե մուկն հալածուեր է . — վերջապէս պէս երրորդ տեսակ մընալ կայ խոշոր մկան, որուն հայրենիքն Իմիրիկէ է, մուկն յարկաց, որ անցեալ գարուն վերջերն Խոտիա տեսնուեցաւ, և մօտերս Գաղղիոյ հիւսիսակողմերն անցաւ :

Ո իացեալ ճահանգաց լրագիր մը կ'ըսէր անցեալները թէ Խւրոպա մկներն իրենց պատմական ժամանակն ունին : Այս այլ բարբարոսներն որ արշաւեցին, ետեւնէն իրենց մասնաւոր մուկն ալ բերին : Խւրոպա տեսաւ Պոթաց մուկը, Ա անդալաց մուկն ու Հոնաց մուկը : Հիմա ալ դարձեալ ունի իր նորմանդացի մուկն, ու դադար մուկն, և Բարիկու լուալեաց մուկը նորեկ է : Պորշագոյն մուկն երկրիս ամէն կողմը տարածուեցաւ քաղաքականացեալ ժամանակաց վաճառականութեան երթեկութեանը պատճառաւ . վեց ու եօթը դար է որ Պաղպիա գրաւեր է, բայց ընկճեցաւ մուկով ու դադար միներէն : — Այս նորեկ միներն, որ յառաջագոյն Խւրոպա անծանօթ էին, Ասիոյ կեղրոնական մեծ լեռնալաշտին

բարձրերէն եկան , ուսկից ինջան հոն և Առղոլ ձիաւորներն հին ցամաքին վրայ , մէկ կողմանէ Հռովմարշաւելու , միւս կողմանէ Շնէքինին տիրելու : Առ կով մուկն հիմա ամէն կողմ կ'ածի , և օրէ օր աւելի կը խոշորնայ , ու աւելի կատղած ու սրառու կ'ըլլայ , կատուին կը յազթէ , շան հետ կը կռուի , և տը զու ու մարդու վրայ կը յարձակի , մանաւանդ քնոյ մէջ . մարդու դիակ կ'ուտէ՝ միշտ աշուշներէն սկսելով :

Ճանապարհորդութիւնը ընդ ծիր աշխարհի : (Տես երես 47)

**Անցր ընդ կիրան Բարսկոնաց կամ ընդ
Ջրանց Մակելյանի :**

Առետասան հազար կուսանաց օրը 52 աստիճանն հասնելով , վաթսունուերկու փարսախ երկայն նեղուց մը գտանք , որ է ըսել 330 մղոն . և այս բանս մեծ հրաշք սեպելով . կոչեցինք զայն Հրուանդան Առետասան հազար կուսանաց . լայնութիւնը տեղ տեղ փարսախ մը և տեղ տեղ ալ կէս փարսախ է : Այս նեղուցը ձիւնալից բարձր լեռներէ շրջապատած է , և կը նայի դէպ 'ի մեծ ծովը , որ ըսուեցաւ Խաղաղական ծով . և գարձեալ աեղ տեղ ալ շատ խորունկ է , ինչուան 25 , 30 կանգուն : Ինաւ չեր գտնուեր այս նեղուցն , եթէ Փերնանդ Մակալիանէս մեծ նաւապետը ըլլար . վասն զի միւս նաւերուն առաջնորդները հակառակ կարծիք ունեին , և կ'ըսէին որ այն կիրճը ըսրս կողմէն փակ էր . դիւտէր Փերնանդ որ ատանկ նեղուց մը կար զորն որ Շնորդուկալի թագաւորին գանձատանը մէջ պահուած աշխարհայոց տախտակի մը վրայ տեսած էր , գծագրեալ Արտինոս պոչեմիացի ըստած պատուական մարդէն :

Պակայն բիւր գժուարութիւններով գտնուեցաւ այս նեղուցս . երբ կրծիս մէջ մտան՝ գտան երկու բերան , մէկը դէպ 'ի հարաւ և միւսն դէպ յարևելս .

մեծ նաւապետը հրաման տուաւ Ս . Անդոն և Յղութիւն նաւերուն ; որ երթան նային թէ արդեօք դէպ 'ի հարաւ եղած բերանն ունի ելք մը առ ծովն Խաղաղական Ս . Անդոնի նաւաստիքը չուզեցին Յղութիւն նաւուն սպասել , որովհետեւ կ'ուզէին Ապանիա դառնալ , ինչպէս որ ըրին ալ . վասն զի հետագայ գիշերը մեծ նաւապետին Ռուլար Ա'եսքիդա եղբօրորդին յափշտակելով , շրջայի զարկին ու հետերնին առած դէպ 'ի Ապանիա Ճամբայ ելան : Այս նաւուն մէջն էր բոնած հսկաներնիս մէկը , որ տաքէն զրկուելով՝ շուտ մը մեռաւ : Այս այսպէս Ս . Անդոն նաւը նոյն գիշերը փախաւ այն կրծէն : Ա'եկալ նաւերը որ գացեր էին դէպ յարևելս եղած բերանը գտնելու , միշտ այն կը ընձէն երթալով , փառաւոր գէտ մը հասան , զոր կոչեցին հրաչուէն , որովհետեւ հոն ամբաւ բազմութեամբ կը գտնուէր այս ձուկէն . մօտ չորս օր ուշացան այն տեղը մէկալ երկու նաւերուն սպասելով . այս միջոցին մեծ մակոյկ մը պատրաստեցին ամէն հարկաւոր եղած բաներով , ու դէպ 'ի մէկալ ծովը խաւրեցին որ հոն եղած անցքը կամ զլուխը գտնէ . ասիկայ քանի մը օրէն զառնալով , պատմեցին մէջի մարդիկը թէ եղած անցքը գտեր էին : Այս լսելով մեծ նաւապետը , այնպէս ուրախացաւ որ ինքիրմէ գուրս ելած՝ կու լար , և կոչեց զայն Պատու Տենչալի , երկայն ատենէ 'ի վեր անոր փափաքելուն համար : Ատ դարձան ան ատեն մէկալ նաւերը փրնարուելու համար , որոնցմէ միայն Յղութիւնը գտան . հարցուցին թէ ուր է Ս . Անդոնը , և իմացան թէ աներեսոյթեղէր է . վասն զի կիրճը մտնելէն 'ի վեր չէին տեսած զանիկայ , և կրծին մէջ փնտուելով չէին կրցած գտնել . ասոր համար լեռնակի մը գլուխը զրօշ մը տնկեցին՝ վրան ալ նամակներ , որպէս զի հոն գալով տեսնեն թղթերը , և իմանան թէ իրենք ուր են . այսպէս ըրին ուրիշ երկու տեղ ալ : Խաչ մ' ալ տնկեցին կղզեկի մը մէջ , որուն քովին՝ ձիւնապատ բարձր լեռան մը ծոյրէն :